Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-362[5]-14.10.2013-ՏՀ-010/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) 123.5-րդ հոդվածի՝

1. 9-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«9. Հայաստանի Հանրապետության տարածքում առանց սահմանված տեղում փակցված ներդիրի թեթև մարդատար ավտոմոբիլներով տաքսամոտորային ուղևորափոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնագպատիկի չափով:

2. լրացնել նոր 14-րդ և 15-րդ մասերով՝

«14.Առանց ներդիրի, կեղծված, չգործող կամ այլ տրանսպորտային միջոցի համար տրված ներդիրով Հայաստանի Հանրապետության տարածքում թեթև մարդատար ավտոմոբիլներով տաքսամոտորային ուղևորափոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

15. Տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կողմից ներդիրն այլ անձի հանձնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 137.2-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 8-րդ պարբերությունում «քսանապատիկի» բառը փոխարինել «հիսնապատիկի» բառով:

2. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Առանց սակաչափիչի (տաքսամետրի) կամ անսարք սակաչափիչով մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:»:

3. 2-րդ մասից հետո լրացնել նոր 3-րդ, 4-րդ և 5-րդ պարբերություններով.

«Առանց տարբերանշանների (տանիքին՝ «ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատաձև դեղին և սև գույնի տարբերանշանի կամ տաքսի-ծառայություն մատուցող

կազմակերպության և տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի մասին տեղեկատվության), գնացուցակի մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Մինչև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար հաջորդ հերթական պետական տուրքը վճարելու օրվան հաջորդող 10-րդ օրը դեղին հիմնագույնի համարանիշը ճանապարհային ոստիկանության համապատասխան ստորաբաժանում չհանձնելը և սակաչափիչի (տաքսամետր) վերաբերյալ սակաչափիչի ստուգաչափման մասին իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանքի (եզրակացության) պատճենը լիցենզիայի ներդիրի վերաձևակերպման համար լիազոր մարմին չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Առանց ներդիրի մեջ համապատասխան նշում կատարված սակաչափիչով (տաքսամետր) մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 224-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «ութերրորդ և իններորդ մասերով» բառերը փոխարինել «ութերորդ, իններորդ, տասնչորսերրորդ և տասնհինգերրորդ մասերով» բառերով.

2. 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերում «8-րդ և 9-րդ մասերով» բառերը փոխարինել «ութերորդ, իններորդ, տասնչորսերրորդ և տասնհինգերրորդ մասերով» բառերով:

**Հոդված 4.** Օրենսգրքի 244.13-րդ հոդվածում «123.5 հոդվածի ութերորդ և իններորդ մասերով» բառերը փոխարինել «123.5 հոդվածի ութերորդ, իններորդ, տանչորսերրորդ և տասնհինգերրորդ մասերով» բառերով:

**Հոդված 5.** Մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով դեղին հիմնագույնի հաշվառման համարանիշները հանձնելը և ներդիրում համապատասխան նշում կատարելը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 123.5-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսված առանց ներդիրի Հայաստանի Հանրապետության տարածքում թեթև մարդատար ավտոմոբիլներով տաքսամոտորային ուղևորափոխադրումներ իրականացնելու համար պատասխանատվությունն առաջանում է առանց դեղին հիմնագույնի հաշվառման համարանիշների թեթև մարդատար ավտոմոբիլներով տաքսամոտորային ուղևորափոխադրումներ իրականացնելու համար:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների

| հ/հ | Առարկության, առաջարկություն հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ կառավարություն | «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ 1.5-րդ հոդվածում էթիկայի կանոնների սահմանման իրավասությունը վերապահել ՀՀ կառավարությանը: անհրաժեշտությունը կարող է իմաստ ունենալ, եթե նախատեսվեն համապատասխան իրավական հետևանքներ, հակառակ պարագայում դրանք պետք է դիտվեն որպես կամավոր կատարման համար նախատեսված կանոններ: | 1.Ընդունվել է: | 1.«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «2.1. Կառավարությունը կարող է սահմանել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 2. Առաջարկում ենք հստակեցնել նախագծի 2-րդ հոդվածում (փոփոխվող 17-րդ հոդված) նշված «և (կամ)» բառերը:Նույն հոդվածի 1-ին մասի վերջին նախադասությունը «իրականացնել» բառից հետո առաջարկում ենք լրացնել «անձամբ» բառով, քանի որ շարադրանքից հետևում է, որ ֆիզիկական անձը կարող է հանդես գալ որպես ուղևորափոխադրման կազմակերպիչ:<br>3. 2-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետում նշված «շախմատաձև դեղին գույնի տարբերանշան» արտահայտության մեջ «դեղին» բառից հետո լրացնել «սև» բառը:<br>4. Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի (փոփոխվող 18-րդ հոդված) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, ըստ որի «փոխադարձ» համաձայնությունը կվերաբերի միայն անկանխիկ վճարմանը: | 2.Ընդունվել է:<br>3.Ընդունվել է:<br>4. Ընդունվել է: | իրականացնելու դեպքում ավտովարորդների էթիկայի կանոններ:»:<br>2.Կատարվել է համապատասխան փոփոխություն:<br>3.Կատարվել է համապատասխան փոփոխություն:<br>4. Կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| **2.** | | «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածից հանել «՝ հետևյալ բովանդակությամբ» բառերը: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| **3.** | | «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «26-րդ հոդվածում» բառերն անհրաժեշտ է | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | փոխարինել «26-րդ հոդվածի 2-րդ մասում» բառերով: | | |
| **4.** | | Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<br>ՀՀ օրենքի նախագծի<br>1. 2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «պաբերության», «պաբերությունը», «պաբերությունից», «պաբերություններով» բառերն անհրաժեշտ է փոխարինել համապատասխանաբար «մասի», «մասը», «մասից», «մասերով» բառերով: Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «ենթակետում» բառն անհրաժեշտ է փոխարինել «պարբերությունում» բառով:<br>2. 6-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է հանել, քանի որ այն կրկնում է 1-ին մասի դրույթը:<br>3.Նախագծի բոլոր մասերից «ինքնակպչուն» բառը հանել:<br>4.Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում տուգանքի չափը սահմանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:<br>5. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով լրացվող նոր 16-րդ մասը հանել, իսկ 2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ վրա հասնող պատասխանատվությունը կապել տարեկան պետական տուրքը վճարելու հետ: | 1. Ընդունվել է:<br>2. Ընդունվել է:<br>3. Ընդունվել է:<br>4. Ընդունվել է:<br>5. Ընդունվել է: | 1.Կատարվել է համապատասխան փոփոխություն<br>2. Կատարվել է համապատասխան փոփոխություն<br>3. Կատարվել է համապատասխան փոփոխություն<br>4. Կատարվել է համապատասխան փոփոխություն<br>5. Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 5. | | «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի 1-ին հոդվածներում «մասով» բառն անհրաժեշտ է փոխարինել «կետով» բառով: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| 6. | | «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող լրացումը կատարել «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածում: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **7.** | | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի<br>1. 2-րդ հոդվածը խմբագրել՝ քաղաքացիների իրավունքները լիցենզավորման գործընթացում փաստաթղթերի ներկայացման տարբերակների ընտրության հարցում (առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով) չսահմանափակելու նպատակով:<br>2. 3-րդ հոդվածում նշված ցանկի 4-րդ կետում | 1.Ընդունվել է:<br>2.Ընդունվել է: | 1.«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «1.1. Լիցենզիավորման գործընթացում փաստաթղթերի ներկայացումը և ստացումը Երևան քաղաքից դուրս կարող է իրականացվել է մեկ պատուհանի սկզբունքով, որի կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:<br>2. Կատարվել է համապատասխան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | «կազմակերպում» բառը փոխարինել «իրականացում» բառով, քանի որ տվյալ պարագայում ֆիզիկական անձը հանդես է գալիս որպես ծառայություններ իրականացնող: | | փոփոխություն |
| 8. | | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել թե որ «ուղևորափոխադրումներ իրականացնող» բառերից հետո պետք է կատարվի լրացումը: | Ընդունվել է: | Նախագծի 1-ին հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ. «Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» և «գ» կետերում «մեկ մարդատար տաքսի-ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ իրականացնող» բառերից հետո լրացնել «ֆիզիկական անձանց և» բառերը» |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9. | ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան | Առաջարկում ենք «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծից հանել զբաղված լինելը (չլինելը) արտահայտող լուսացուցիչներին և թափքի կողային մասում շախմատաձև տարբերանշմամբ գծանշումին վերաբերող տաքսամոտորային փոխադրումներն իրականացնողների ավտոտրանսպորտային միջոցների կահավորանքին ներկայացվող պահանջները: | Ընդունվել է: | «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասից հանվել են «զբաղված լինելը (չլինելը) արտահայտող լուսացուցիչներով» բառերը, ինչպես նաև «Տաքսամոտորային փոխադրումներն իրականացնողների ավտոտրանսպորտային միջոցները թափքի կողային մասում պետք է ունենան շախմատաձև տարբերանշմամբ գծանշում» նախադասությունը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Առանց տարբերանշանների (տանիքին՝ «ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատաձև դեղին և սև գույնի տարբերանշանի կամ տաքսի-ծառայություն մատուցող կազմակերպության և տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի կամ անհատ ձեռնարկատեր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | չհանդիսացող ֆիզիկական անձի մասին տեղեկատվության), գնացուցակի մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:» |